

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/8

23 հունիսի 2015 թ.

Քննարկվեց «Շամիրամ» ՋՕԸ 21.05.2015 թ-ի և 29.05.2015 թ-ի գրություններով բերված գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 07.04.2015 թ-ին թիվ 85 որոշման դեմ:

«Շամիրամ» ՋՕԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 85 որոշմամբ չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 252.656 դրամ եկամտային հարկի գումար, որն առաջացել է 2015 թ-ի մարտ ամսվա հաշվարկով առաջադրված գումարներն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելուց: Ներկայացվել են 2015 թ-ի մարտ ամսվա հաշվարկն ու դրա դիմաց կատարված վճարումների վճարման հանձնարարագրերի պատճենները, որոնցով հավաստվում է «Շամիրամ» ՋՕԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից բյուջեի նկատմամբ իր պարտավորությունները կատարելու մասին:

Ընկերությունը Աշտարակի ՏՀՏ-ից բանավոր կերպով պարզել է, որ այդ գումարն առաջացել է ոչ թե 2015 թ-ի մարտ ամսվա հաշվարկից, ինչպես նշված է թիվ 85 որոշման մեջ, այլ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը կիրառելուց:

«Շամիրամ» ՋՕԸ-ն շահույթ չհետապնդող, ոչ առևտրային կազմակերպություն է և գործում է 2004 թ-ից:

2014 թ-ի օգոստոսի 20-ին ընկերությունը չի կարողացել էլեկտրոնային եղանակով հանձնել հարկային հաշվետվությունների 114 և 109 ձևերը: Սկզբում դա կապված էր Taxservis.am կայքի աշխատանքի հետ, որի պատճառով ընկերությունը գրավոր տեղյակ է պահել Աշտարակի ՏՀՏ-ին և հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը փոստային առաքմամբ ուղարկել է ՀՏ: Հաջորդող օրերին նույնպես չի հաջողվել լրացնել 114 ձևը և դրա հիման վրա լրացնել նաև 109 ձևը: 060544444 հեռախոսահամարով կապվելով ՊԵԿ օպերատորի հետ ընկերությունը պարզել է 114 ձևի չբացվելու պատճառը, որը կայանում էր նրանում, որ ընկերությունը 01.07.2014 թ-ից հանձնվող եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկի համակարգում՝ Աշտարակի ՏՀՏ-ի կողմից գրանցվել է որպես ՀՈԱԿ: Նշվածը պարզելուց հետո ընկերությունը 22.08.2014 թ-ին տեղեկացրել է Աշտարակի ՏՀՏ-ին համապատասխան ուղղում կատարելու համար:

Ընկերությունը ՊԵԿ օպերատորների և Աշտարակի ՏՀՏ-ի հետ անընդհատ եղել է կապի մեջ, որոնք հավաստիացրել են, որ խնդրի մասին տեղյակ են և համակարգում կկատարվեն ծրագրային փոփոխություններ: Ընկերությունը տեղյակ էր նաև, որ կապված հաշվետվությունների հանձնման համակարգում առկա որոշակի խնդիրների հետ 2014 թ-ի հուլիս ամսվա հաշվետվությունների ու ներկայացման հետ կապված՝ վարչարարություն չպետք է կիրառվի:

2014 թ-ի սեպտեմբերի վերջին Աշտարակի ՏՀՏ-ից հեռախոսով կապվել են Ընկերության հետ և տեղեկացրել, որ առանց սպասելու մինչև կկատարվեն

ծրագրային փոփոխությունները, անհրաժեշտ է հանձնել 2014թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը: Ընկերությունը էլեկտրոնային եղանակով անմիջապես ուղարկել է 2014 թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը սխալներով, չնայած, որ համակարգի թերությունների պատճառով արտահայտվեց սոցիալական վճարից հրաժարված անձանց գծով համակարգում սոցիալական վճարի ավտոմատ կերպով հաշվարկումը (գոյացող պարտավորություն):

Չնայած այն հանգամանքին, որ դրանից հետո էլ չի ուղղվել համակարգային սխալը, ընկերությունը հետագա ամիսներին շարունակեց սխալներով հանձնել եկամտային հարկի հաշվետվությունները: Համակարգում ուղղումը կատարվել է 2014 թ-ի դեկտեմբերի 18-ին և ընկերությունը 114 ձևը էլեկտրոնային եղանակով ուղարկել է: Սակայն համակարգային փոփոխությունները կատարվել էին թերի, ուղղումից հետո աշխատողների կարգավիճակի փոփոխությունը կատարվում էր հաջորդ՝ 2015թ-ի հունվար ամսվանից:

18.12.2014 թ-ին ընկերությունը դիմել է ՀՀ Ֆինանսների նախարարին, ներկայացնելով հարցը և խնդրել է, որպեսզի կատարվեն ծրագրային ուղղումներ՝ 2014 թ-ի հուլիս-դեկտեմբեր ամիսների եկամտային հարկի հաշվետվությունները ճշգրտելու համար:

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 16.01.2015 թ-ի պատասխան գրությամբ տեղեկացվել է, որ եկամտային հարկի ամփոփ հաշվարկի /ձև 109/ ներկայացումը կապված չէ սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու դիմումի ներկայացման հետ /ձև 114/:

Եթե կապված չէր, ապա Աշտարակի ՏՀՏ-ից ընկերությանը կարող էին զգուշացնել նախքան «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված 15 օրյա ժամկետի լրանալը, առավել ևս այն դեպքում, երբ ընկերությունը այդ հարցով անընդհատ անհանգստացրել է և՛ տարածքային ՏՀՏ-ին և՛ ՊԵԿ օպերատորներին:

Միևնույն ժամանակ, եթե պետք է կիրառվեր «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը, ապա վարչական վարույթ պետք է սկսվեր փաստը հայտնի դառնալու (այսինքն՝ 22.09.2014 թ-ից) օրվանից երկամսյա ժամկետում, որն ընկերությունը կբողոքարկեր: Այնինչ, Աշտարակի ՏՀՏ-ի պետի թիվ 85 որոշումից պարզ է դառնում, որ հաշվարկվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը, որի գումարը պակասեցվել է 2015 թ-ի մարտ ամսվա համար վճարած եկամտային հարկի գումարներից: Մինչ օրս, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքի գումարի վճարման պահանջ չի ներկայացվել, այլ ներկայացվել է 2015 թ-ի մարտ ամսվա հաշվարկով առաջադրված գումարներն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աշտարակի ՏՀՏ-ի պետի թիվ 85 որոշման բողոքարկման ժամկետի ավարտը մոտենում է, ընկերությունը խնդրում է գանգատարկման հանձնաժողովին հասցեագրած 21.05.2015 թ-ի դիմումը քննարկել սույն գանգատի հետ միասին, քանի որ դրանք կապակցված են:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստերը՝ Ընկերությունը խնդրում է վերանայել Աշտարակի ՏՀՏ պետի թիվ 85 որոշումը՝ հաշվառման քարտից նվազեցնելով (առկայության դեպքում) «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքի գումարը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով «Շամիրամ» ՋՕԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 02.04.2015 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 252.656 դրամ եկամտային հարկի գծով, որն առաջացել է 2015 թ-ի մարտ ամսվա հաշվարկով առաջադրված գումարները սահմանված ժամկետում չվճարելուց: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի կողմից 07.04.2015 թ-ին ընդունվել է թիվ 85 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Շամիրամ» ՋՕԸ-ի-ից 252.656 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Որոշմամբ գանձման առաջադրված գումարի կապակցությամբ հարկ է նշել, որ ընկերությունը 2014 թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու հետևանքով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվել է 218.733 դրամ տուգանք: Այնուհետև, ընկերության կողմից եկամտային հարկի գծով կատարվել են ոչ նպատակային վճարումներ, որի արդյունքում ընկերության անձնական հաշվի քարտից նվազեցվել է առկա 218.733 դրամ տուգանքի գումարը և 02.04.2015 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմել են 252.656 դրամ, որից ապառք 246.189 դրամ, տույժ 6.467 դրամ:

Քննարկման ընթացքում հաստատվեց, որ «Շամիրամ» ՋՕԸ-ի կողմից 2014 թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը (այսուհետ՝ Հաշվարկ) սահմանված ժամկետում չներկայացնելը պայմանավորված է եղել ՀՀ ՖՆ հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգում առկա խնդիրներով, ինչպես նաև ընկերության կազմակերպ-իրավական կարգավիճակի վերաբերյալ տվյալները «Հարկատու 2», հետագայում նաև «Հարկատու 3» համակարգեր սխալ մուտքագրվելու հանգամանքով: Այդ խնդիրների վերաբերյալ ընկերությունը բազմիցս բարձրաձայնել է թե՛ Աշտարակի ՏՀՏ, թե՛ ՀՀ ֆինանսների նախարարության թե՛ գծին:

Հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված խախտումների առկայության համար անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան խախտումը (արարքը) ընկերության կողմից կատարված լինի մեղավորությամբ: Հետևապես, սույն գործով իրականացվող վարչական վարույթի ընթացքում անհրաժեշտ է նախ պարզել «Շամիրամ» ՋՕԸ-ի վարքագծում մեղքի առկայության փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու հանգամանքը, ինչը և հանգեցրել է ընկերության նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցի կիրառմանը, չի կարող միանշանակ որակվել որպես «Շամիրամ» ՋՕԸ-ի կողմից կատարված խախտում, քանի որ վերջինս կատարվել է ընկերությունից անկախ հանգամանքների բերումով: Այսինքն, ընկերության վարքագծում, ըստ էության, բացակայում է մեղքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Հաշվարկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չներկայացնելը չի կարող առաջացնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

«Շամիրամ» ՋՕԸ անձնական հաշվի քարտից նվազեցնել 2014 թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված տուգանքի գումարը և վերանայել ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 07.04.2015 թ-ի թիվ 85 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունը:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

